




Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Թ. — ՇՐՋԱՆ ԺԷ.

1884

ՏԱՐԻ ԺԷ. ՍԵՊՏԵՄ. 30.

ԿՐՕՆԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅՍ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻԻՆ.

(Շարանակ. Արարատ, Բ. Ը.)

ԳԼ. Ե.

Ս. Վրթանէսին 356 թ. յաջորդեց իւր կրօսքը սրդին Յուսիկ, որ ամուսնացած էր Տիրան թագաւորի աղջկայ հետ և ունէր երկու որդի Պապ և Աթանազինէ: Յուսիկ իւր ամուսնոյ հաճութեամբ արգէն առանձնացած և հրաժարուած աշխարհի վայելչութիւններից՝ ազօթքով և Սուրբ Գրոց ընթերցմամբ էր պարապում, երբ որ ընտրուեց կաթողիկոս և հետևելով իւր նախորդների օրինակին՝ սկսեց հոգ տանել եկեղեցու պայծառութեան: Յունաց կայսր ամբարիշտն Յուլիանոս քրիստոնեաների ոխերիմ թշնամին՝ Պարսից դէմ արշաւանքի ժամանակ Հայաստանից անցնելիս, տախտակի վերայ նկարած իւր պատկերը տուեց Տիրան թագաւորին՝ եկեղեցիներում արևելեան կողմը կանգնացնելու համար: Երբ Տիրան պատրաստուեմէր այս պատկերը իւր ձեռքով դնել Ծովաց գաւառի իւր արքունական եկեղեցում, Ս. Յուսիկ իրեց և գետին ձգելով կոխտեսց ու փշրեց. և այս բանի համար

362 թ. Տիրան թագաւորի հրամանով գանահար վախճանուեց իւր հայրապետութեան 6րդ տարին, և թաղուեց Թորգանում՝ իւր հօր գերեզմանի մօտ:

Ս. Յուսիկի երկու որդիքը իրանց վարուց ապականութեամբ արժանի չէին հայրապետական աստիճանի¹⁾, ուստի նախարարները Տիրանի հաճութեամբ Ս. Գրիգոր Լուսաւորչի աշակերտներէից Դանիէլ ծերունուն 362 թ. ընտրեցին կաթողիկոս: Դանիէլ ազգով Ասորի էր և Ս. Լուսաւորչից քահանայ ձեռնադրուելով՝ բնակումէր Տարօնոյ Հացեաց Դրախտ վանքում. սա կաթողիկոս ընտրուելուց յետոյ Տիրանին առաջին անգամ ներկայացած ժամանակ սկսեց յանդիմանել նորան՝ եկեղեցում Յուլիանոսի սպառնալիքը դնելու, և Ս. Յուսիկին սպանելու համար: Այս պատճառով էլ բարկացած թագաւորի հրամանով խեղդամահ եղաւ և թաղուեց Հացեաց Դրախտ վանքում:

Ս. Յուսիկան որդի Աթանազ'նէ ամուսնացած լինելով Տիրանի Բամբիշ կոչուած քրոջ հետ՝ ունէր մի որդի՝ Ներսէս անուն, որ Կեսարիայում և Կոստանդնուպօլսում կրթութիւն առնելուց յետոյ, Կոստանդնուպօլսում ամուսնանալով Ասպիոն անուամբ մի իշխանի դստեր հետ՝ գտնվումէր զինուորական ծառայութեան մէջ. ուստի Ս. Դանիէլի մահից յետոյ նախարարները Լուսաւորչի ցեղից յարմարաւոր մարդ չըգտնելով, առանց հայրապետի ևս չըմնալու համար 362 թ. Աշտիշատ գիւղից Փառներսէհին ընտրեցին կաթողիկոս²⁾:

Փառներսէհ կամ Փառէն չունէր իւր կոչմանը պատշաճ ազդեցութիւն. ուստի նախարարներն ու թագաւորը սկսեցին մոլութեանց անձնատուր լինել. իսկ Փառներսէհ թէպէտ սրբակեաց և առաքինի, բայց չէր վստահանում նոցա յուղղութիւն հրաւիրել, և այսպէս մօտ չորս տարի վարելով հայրապետական իշխանութիւնը վախճանուեց և թաղուեց Տարօնոյ Ս. Կարապետի վանքին մօտ գեղեցիկ շիրմի մէջ³⁾:

(1) Խոր. գիրք Գ. գլուխ ԺԶ.

(2) Բիւզ. Դպ. Գ. գլ. ԺԶ. երես 44, տպեալ ի Վենետ. 1832 թ.

(3) Փառներսէհի մահից յետոյ Բիւզանդ (Դպր. Գ. եր. 45) Շահակ անուն մի կաթողիկոս էլ է յիշում, պաշտօնավարութիւնը նմա-

Փառներսէ՛հի մահից յետոյ Արշակի մօտ ժողովուեցին *) զանա-
պան ցեղերի և տոհմերի մեծամեծ նահապետները, բոլոր զօրա-
պետները, նախարարները, ազատները, իշխանները, զօրավար-
ներն ու սահմանապահները, և Յուսկան թոռն Աթանազինէի որ-
դի 'Ներսէսին' որ Կոստանդնուպօլսից վերադարձած լինելով, Ար-
շակ թագաւորի սենեկապետ էր կարգուած, ընտրեցին կաթու-
ղիկոս: Ներսէս թէ՛ և հրաժարւումէր ընդունել այս պաշտօնը՝ իւր
անարժանութիւնը առաջ բերելով, սակայն չըկարողանալով դիմա-
դրել բոլորի ցանկութեանը, յանձն առաւ և ընտրութիւնից յետոյ
364 թուին Կեսարիայի եպիսկոպոսից ստանալով սուրբ օծումն՝
սկսեց եկեղեցու բարեկարգութեան և ժողովրդեան բարեկեցու-
թեան համար հոգալ: Ներսէս իբրեւ Նուսաւորչի սերունդ՝ առաջ-
նակարգ նախարարութեան շառաւիղ և թագաւորական տան մեր-
ձաւոր ազգական, իւր այս բոլոր հանգամանքով արդէն ակնածելի
և ազդեցութեան տէր մարդ էր, իսկ իւր առաքինի վարքով սիրե-
լի. դեռ զինուորական ժամանակ որբերի ու այրիների հայր, հի-
ւանդների ու թշուառների խնամակալն էր. նորա սեղանից անպա-
կաս էին աղքատներն ու թշուառները: Ներսէս սուրբ օծումն ըն-
դունելուց յետոյ Կեսարիայից վերադառնալով, 365 թուին Արշակ
թագաւորի հաւանութեամբ և եպիսկոպոսների ու նախարարների
ներկայութեամբ ներմուծուելիք բարեկարգութեան համար Աշտի-
շատու Ա. ժողովը գումարեց: Ժողովը բարեկարգութեան համար
վեց կանոն սահմանեց հաստատելով թագաւորի հրամանով և իւր
նշովքով. և ժողովի սահմանադրութեան համեմատ, Ներսէս սկսեց
գործել. նա արգելեց մերձաւոր ազգականների ամուսնութիւնը՝ որ
նկատելի էր նախարարների մէջ՝ որպէս զի տոհմային ժառան-
գութիւնները ուրիշի ձեռքը չանցնէին. արգելեց ննջեցեալների
վերայ հեթանոսաբար կոծելը, անգթութեան արմատը խզելով՝
հաստատեց ողորմածութիւն, շինեց պատասպարաններ բորոտնե-
րի համար, որոնք որպէս օրէնքով պիղծ համարուածներ՝ հալա-
ծուած էին լինում, ուրկանոցներ հաստատեց արտաքսուած ու-
րուկների համար՝ որոնք անապատներումն էին հանգիստ գրտ-

նացնելով Փառներսէ՛հին, իսկ Խորենացին, Յովհաննէս կաթուղիկոս և
այլք Փառներսէ՛հի անմիջապէս Ներսէսի ընտրութիւնն են դնում:

(*) Բիւզ. Դպր. Դ. 41. Գ.

նում, իսկ պապական՝ վեմերն ու մացառներն էին, առանց մէկից իրանց թշուառութեան մխիթարութիւն գտնելու. հաշմանդամների համար՝ որոնք անխնամ էին մնում, անծանօթ հիւրերի համար՝ որոնք հիւրընկալութիւն չէին գտնում և օտարների համար՝ որոնք առանց պատասպարութեան էին մնում, իւրաքանչիւր գաւառում պատասպարաններ և հիւրանոցներ շինեց. առանձին տեղերում աղքատանոցներ շինեց և ի հասոյթ սահմանելով անգաստանների բերքերից, կթաններից և բրթեղէններից բաժին և այս բոլոր հաստատութեանց վերայ տեսուչ կարգեց Կարնեցի իւր Խաղ սարկաւագին: Ամեն գիւղում հիւրանոց շինեց օտարներին, ծերերին և որբերին պատասպարելու համար. անպատ տեղերում վանքեր, մենաստաններ և ճգնարաններ շինեց, տեսուչ կարգելով Ս. Դանիէլ ծերունու աշակերտներից Շալիտայ¹⁾, Եփրեմ, Եպիփան²⁾, Սլիունի Գինտ³⁾ և ուրիշ կրօնաւորներին⁴⁾: Ներսէսի շինած բարեգործական հաստատութեանց և վանքերի թիւը 2000 ից աւելի են համարում:

Արշակ Թագաւորը, նախարարները և մեծամեծները տեսնելով Ներսէսի մեծագործութիւնները, 366 թ. բոլոր նախարարների և եպիսկոպոսների ներկայութեամբ Վաղարշապատու Բ. Ժաղաճ գումարեցին և սահմանեցին Հայ կաթողիկոսին Պատրիարք կոչումն տալ⁵⁾, օրէնք դնելով որ Հայ Պատրիարք կաթողիկոսները այլ ևս Կեսարիա չըգնան սուրբ օծումն ընդունելու համար, այլ իրանց եպիսկոպոսներից ընդունեն:

(1) Բիւզ, Գպր. Ե. գլ. ԻԶ.

(2) Բիւզ. Գպր. Ե. գլ. ԻԷ.

(3) Բիւզ. Գպր. Զ. գլ. ԺԶ.

(4) Խոր. գիրք Գ. գլ. Ի.

(5) Ոմանք Կոստանդիանոսի դարձն ի քրիստոնէութիւն յիշելով՝ ասումեն որ Տրդատ Ս. Գրիգոր Լուսաւորչի հետ գնացել է Հռոմ՝ ի խնդակցութիւն, և Կոստանդիանոսի հետ դաշն է կապել՝ միմեանց զօրավիգն լինելու: Որչափ և հաւանական լինի Տրդատի և Կոստանդիանոսի միջև այդպիսի մի դաշնագրութեան գոյութիւնը, ըստ ամենայնի մտացածին է Ս. Գրիգորի՝ Հռոմէայ հայրապետ Սեդրեստրոսի գերիշխանութիւն ընդունելը և ընդ իրաւասութեամբ նորա Հայաստանեայցս պատրիարք կարգուիլը՝ ինչպէս պնդումեն Հայ կաթողիկ հեղինակները, որպիսի են Հ. Մ. Վ. Զամչեան (հատ. Ա. գիրք Բ. գլ. ԼԹ. և նոյն՝ հատոր Ա. գիրք Բ. գլ. ԽԳ.): Հ. Իգնատիոս

Ներսէս իբրեւ Պատրիարք Կաթողիկոս և իբրեւ Հայր խնամա-
կալ Հայ ժողովրդեան, պարտաւորուեց նորա անդորրութեան հա-
մար ևս հոգալ, վասն զի Արշակ թագաւորը իւր անդգուշութեամբ
թէ Յոյներին և թէ Պարսիկներին թշնամացրել էր իւր դէմ, և
ժողովուրդը նշաւակ էր մնացել այդ երկու պետութեանց աւե-
րածութեանց: Վաղենդիանոս կայսրը Արշակի Տրդատ եղբորը,
որ իւր Գնէլ որդու հետ պատանդ էր, սպանելուց յետոյ՝ Թէ-
ոդոս սպարապետին ծանր զօրքով ուղարկեց Հայաստան: Ներսէս
տեսնելով Արշակի նեղ գրութիւնը, Հայաստանի վերահաս վր-
տանգը՝ մի քանի մարդոց հետ գնաց Թէոդոսի մօտ հաշտութիւն
խօսեց և դադարացրեց պատերազմը ու աւերածութիւնը: Յետոյ
գնաց Կոտտանդնուպօլիս և Յուլիանոսի օրով Կոստանդնուպօլսում
պատանդ մնացած ուրիշ պատանդների հետ ազատեց Գնէլին՝
որ Հայաստան գալով, ընակուեց Կուշ աւանում և թագաւորա-
վայել հարսանիքով ամուսնացաւ Սիւնեաց Անդոկ իշխանի Փառան-
ձեմ դստեր հետ: Արշակ գեռ չէր կարողացել երկիրը խաղաղել
Պարսից ասպատակութիւնից, և ահա մի ուրիշ ներքին խռովութեան
պատճառ դարձաւ շինելով Արշակաւան քաղաքը, և շուտով մար-
դաբնակ անելու համար « տեղի ապաստանի յանցաւորաց » յոտ-
կացնելովը: Նախարարները տեսնելով որ իրանց յանցաւոր ծառա-
ները ապաւինումեն Արշակաւան և անպատիժ են մնում, իսկ
երկիրը յանցաւոր մարդկանց անպատիժ մնալուն համար անկար-
գութեան է ենթարկվում, զօրավիգն եղան Պարսից զօրքերին՝
որոնք Յունաց արշաւանքից վերադառնումէին Պարսկաստան և
այսպէս ողաշարեցին և առան ամուրն Անի՝ ուր ապաւինել էր Ար-
շակ արքունի գանձերով: Արշակ հաղիւ մաղապուրծ Վրաստան

Փափազեան (Պատմ. եկեղեց. երես 218 ի հատուածն ժողով Վա-
ղարշապատու Բ. յամի Տեառն 366), և այլք: Մտացածին ենթադրու-
թիւն է կարծելը թէ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ ընդունած լինի Հոով-
մայ Հայրապետ Սեղբեստրոսի գերիշխանութիւնը և նորանից Հայաս-
տանեայցս պատրիարք կարգուած, վասն զի թող միւս պատճառները,
այդ ժամանակի եկեղեցւոյ Հարք գերիշխանութեան խնդիրներով չէին
զբաղվում, այլ իւրաքանչիւրը աշխատումէր Յիսուսի Քրիստոսի պա-
տուիրած հեղուծեամբ և խոնարհութեամբ փայլել, հետեւեալ ոչ
սուրբն Սեղբեստրոս ցանկութիւն ունէր գերիշխանութեան հետամուտ
լինելու և ոչ սուրբ Գրիգորին հարկ կար այդ գերիշխանութիւնը ըն-
դունելու:

փախաւ, իսկ Պարսիկ զօրքերը քարուքանդ արին քաղաքը և արքունի գանձերը հանգուցեալ թագաւորների ոսկրների հետ տարան Պարսկաստան:

Նախարարները դիպող ժամ գտնելով, յարձակուեցին Արշակաւանի վերայ, աւերեցին քաղաքը և կոտորեցին բոլոր ընակիչներին՝ բացի ծծկերներից, որոնց Ներսէս փութով օգնութիւն հասաւ և յատուկ խնամակալների ձեռքով որթից շինած կողովների մէջ զետեղելով՝ այլուր փոխադրեց: Այդ մանուկները մեծանալով Որթունիք կոչուեցին: Ներսէսի յորդորմամբ և նախարարների խնդրանք Պարսից Շապուհ թագաւորը յետ դարձրեց թագաւորաց ոսկրները, և որովհետեւ քրիստոնեայ Տրդատ և Խոսրով Բ. թագաւորի ոսկրները խառնուել էին կռապաշտ թագաւորների ոսկրների հետ, այս պատճառով էլ Վաղարշապատում չթաղեց, այլ Արագած լեռան ստորոտի Աղց աւանում: Ներսէս շատ աշխատելով կարողացաւ Արշակ թագաւորին և աւագ նախարարներին հաշտեցնել, միայն Արծրունեաց Մեհրութան և Մամիկոնեան Վահան անհաշտ մնացին և Պարսկաստան գնալով, ուրացան քրիստոնէական հաւատը, և փառքի ու պատուի համար իրանց հայրենի երկիրը՝ պարսիկների աւերածութեանց ասպարէզ դարձրին:

Ներսէս տեսնելով Յոյների նպատակը, որոնք Հայաստանին տիրելու համար միշտ աշխատումէին ներքին խռովութեամբ ջլատել. Պարսիկների ջանքը—որ ամեն հնարք դործ էին դնում կործանելով Արշակունի հարստութիւնը՝ Հայաստանը Պարսից մի գաւառ դարձնել և մազդեզանց կրօնին դարձնելով՝ ջնջել Հայ անունը, և նախարարների երկպառակութիւնն ու ներքին խռովութիւնը—որով նպաստումէին թէ Յունաց և թէ Պարսից նպատակներին — խոր խոցվումէր: Նա որպէս պահապան հրեշտակ հսկումէր, որ թագաւորն ու նախարարարները իրանց քրիստոնեայ կոչման հետ՝ քրիստոնէական մարդասիրութեամբ և ընկերսիրութեամբ վարուեն միմեանց հետ և Աւետարանի փրկարար վարդապետութեան նմանեցնելով իրանց վարքն ու բարքը՝ երկրի շինութեան և եկեղեցու պայծառութեան պատճառ դառնան. սակայն նոքա՝ թուլութեան,՝ զեղխութեան և մոլութեան մէջ ընկած, պատուհաս էին դարձել միմեանց և ժողովրդին:

Նախարարները՝ միմեանցից վրէժ լուծելու և Արշակունի հա-

բառութիւնը կործանելու համար անհնաւթափութեան ժողովրդի արիւնը, իսկ թագաւորը՝ անհեռաւորութեամբ նշաւակ է դարձրել երկիրը ներքին խռովութեանց և Պարսից ու Յունաց սրածուծութեանց, փոփոխակի օգնելով մէկն ու մէկին և նոցա թշնամութիւնը գրգռելով. ուստի յետին թշուառութեան մէջ՝ հոգիս ապաստան ժողովուրդը միւթարութիւն էր գտնում՝ Ներսէսի միջոցաւ, որ 377 թուին իւր փոխանորդ թողնելով Արշարունեաց եպիսկոպոս իւր Խաղ Սարկաւագին, Արշակի թղթով խաղաղութիւն խօսելու համար նորից գնաց Թէոդոսի մօտ, որ հասել էր Հայոց սահմանը՝ վրէժխնդիր լինելու այն բանին, որ Արշակ օգնել էր Շապուհին, նորա՝ Յունաց դէմ վարած արշաւանքի ժամանակ: Ներսէս յանձնելով Թէոդոսին Հայոց աշխարհի հարկը և Արշակի Պապ որդու հետ ուրիշ պատանդներ, յետ դարձրեց և ինքն էլ հետը Կոստանդնուպօլիս գնաց:

ԳԼ. Զ.

Ներսէս Կոստանդնուպօլսում՝ մեծամեծ նեղութեանց ենթարկուեց. վասն զի Վաղէս հակեալ լինելով դէպի Արիոսականութիւն, առհասարակ լաւ չէր վարվում այդ աղանդից զերծ անձանց հետ: Նոյնպէս վարուեց նա Ներսէսի հետ էլ. չընդունեց Արշակի թուղթը և եթէ Թէոդոս չըմիջնորդէր, պէտքէ սպանէր պատանդներին: Վաղէսի ժամանակով Կոստանդնուպօլսում՝ մեծ յուզմունք էր պատճառում նաև տեղւոյն պատրիարք հոգեմարտն Մակեդօն՝ իւր աղանդով. Արիոսականները՝ Ներսէսին իրանց կողմը գրաւելու համար, խոստացան նորա բոլոր ցանկութիւններին կատարումն տալ Մակեդօնի միջնորդութեամբ, սակայն Ներսէս-մերժեց նոցա խոստումները և ձմեռնային ցրտաշունչ եղանակին իւրայինների հետ աքսորուեց հեռաւոր կղզիներ. նաւարկութեան ժամանակ մի անմարդաբնակ կղզու մօտ նաւը խորտակուեց և Ներսէս իւրայինների հետ այդ կղզում ութն ամիս պարսաւորուեց միայն ձկնով շատանալ: Վաղէսի վաղահաս մահուամբ և Թէոդոսի թագաւորելովը, ի շարս ուրիշ աքսորեալների՝ Ներսէս ևս 379 թ. վերադարձաւ աքսորից և մասնակցեց ընդդէմ հոգեմարտն Մակեդօնի, Կոստանդնուպօլսում 381 թ. գումարուած արևելեան 150 հայրապետների Տիեզերական ժողովին: Ժողովը բարեկարգութեան համար եօթն յօդուած կանոն հաստատեց և դատապարտեց Կոստանդնու-

սլօշոյ պատրիարք Մակեդոնի աղանդը՝ որ համարումէր թէ Հոգին Սուրբ արարած է, Լաւողիկէի եպիսկոպոս Ապօղինարի աղանդը՝ որ համարումէր թէ քրիստոսի մէջ մարդկային մտքի փոխանակ եղաւ բանն Աստուած, և թէ նորա մարմինը բերուեց երկնքից և ծնունդը սուրբ կուսից եղաւ, որպէս ընդ խողովակ անցումն. և Սուրբ Երրորդութեան մէջ՝ աստիճաններ էր դնում, Հայրը առաջինը, Որդին Դուռնի իսկ Սուրբ Հոգին Դուռնի կոչելով, և Եւնամեաններին՝ որոնք համարում էին թէ Ս. Հոգին ոչ թէ Հօրից, այլ Որդուց է դուրս գալիս:

Կոստանդնուպօլսոյ Տիեզերական Սուրբ Ժողովի Հարք վճռեցին հակառակ Եւնոմեանների և Մակեդոնականների, սուրբ Հոգու վերաբերութեամբ Նիկիոյ հանգանակի մէջ աւելացնել « Հոգին սուրբ է տէր և կենդանարար, որ ի Հօրէ ելանէ », և ընդգէմ՝ Ապօղինարեանց թէ « Յղացաւ Հոգւով Սրբով ի Մարիամայ կուսէն » *):

Ներսէսի Յունաստանում եղած ժամանակ հայ Ժողովրդեան վիճակը աւելի ևս վատթարացաւ և երկիրը սրածութեանց ապարէզ դարձաւ. վասն զի Արշակ որ փոքր ի շատէ ակնածումէր Ներսէսից, նորա բացակայութեան ժամանակ սկսեց իւր մոլութեանցը և կրքերին անձնատուր լինիլ, նա իւր եղբօրորդի Գնէլին սպանեց և նորա կալուածքին տիրանալու համար հակառակ քրիստոնէական օրէնքին՝ ամուսնացաւ Գնէլի կնոջ Փառանձեմի հետ, որի դրդմամբ Մրջիւնիկ անուամբ անարժան մի քահանայի ձեռքով թունաւորեց իւր Ողիմբիադա առաջին կնոջը, և սպանել տալով արեւելեան գնդի սպարապետ Վաղինակ Սիւնուն, նորա տեղ սպարապետ կարգեց Փառանձեմի հօրը — Սիւնեաց Անդոկ նախարարին. ոտքի տակ տուեց նախարարների հետ ունեցած հաշտութեան դաշն և Արշակաւանի կոտորածի վրէժը լուծելու համար կամսարականների ցեղը բոլորովին ջնջեց՝ բացի Սպանդարտից, որ իւր արքայազն Արշանոյշ կնոջ հետ Հաշտենից գաւառումն էր: Արշակ կամեցաւ Խադ եպիսկոպոսին էլ սպանել, բայց նա ազատուեց դահիճների ձեռքից իւր աղջկայ տագր Ասպհունիների ձեռքով: Այս ամեն չարիքը տեսնելով նախարարները, Ներսէսի բացակայութեան ժամանակ, դիմեցին Պարսից Շապուհ

(*) Եկեղ. Պատմ. Հ. Իգնատ. վարդ. Փափաղ. գլ. Ի. Էր. 183: 2-րդ. հատ. Ա. գիրք Բ. գլ. Խէ. եր. 459:

Թագաւորին խնդրելով ջնջել Արշակունի հարստութիւնը: Շապուհ հէնց այս էր կամենում. ուստի իւր Ալանոզան Պաշլաւիկ զօրավարին մեծ պատրաստութեամբ ուղարկեց Հայաստան: Արշակ սկզբում յոյս ունէր Ալանոզանին գրաւել որպէս իւր ազգակցի ու ցեղակցի. բայց երբ որ ի դերեւ ելաւ այս յոյսը, անձնատուր եղաւ և մեռաւ Անյուշ բերդում: Պարսիկները երկիրը աւերակ դարձրին. իսկ Ներսէս այս լուրը առնելուն պէս, ամեն ջանք գործ դնելով, Կոստանդնուպօլստում պատանդ եղած Պապ արքայորդուն Հայաստանի վերայ Թագաւոր կարգել տուեց և Յունական բազմաթիւ զօրքերով վերադարձաւ Հայաստան այն ժամանակ, երբ հաւատուրաց և ազգուրաց Մեհրուժան Արծրունին և Վահան Մամիկոնեանը յոյս ունենալով Շապուհի խոստմանը, թէ Հայաստանը նուաճելուց յետոյ, կըթագաւորեն Արշակունեաց տեղ՝ մեծամեծ կոտորածներ էին անում: Մեհրուժան քրիստոնէութիւնը Հայաստանից ջնջելու համար կալանաւորումէր բոլոր եպիսկոպոսներին ու քահանաներին և Ասորեստան ու Պարսկաստան էր արքայորդում: Յունարէն բոլոր գրքերը այրեց, ցրուած նախարարներին ընդ բռամբ ածելու համար՝ նոցա կանանց և ընտանեացը բանդարկեց, — պատուիրելով յունարէնի տեղ Պարսից լեզուն և գիրը սովորել և գործ ածել, քրիստոնէութեան տեղ՝ մազդեզանց օրէնքին հետեւել:

Ներսէս Մեհրուժանի այս խժոճութեանց ժամանակ Պապի և Տիրենդիանոս զօրավարի հետ Յունական զօրքերով Հայաստան հասաւ. նախարարները երբ լսեցին այս, իսկոյն ամենայն կողմից հաւաքուեցին և միացան Ներսէսի հետ, և Հայոց գնդին զօրավար նշանակուեց Սմբատ Բագրատունին: Մեհրուժան լսելով այս ամենը, հրամայեց նախարարների կանանցը բերդերից կախ տալով՝ խեղդամահ անել. Պապի վերադարձը Շապուհին իմաց տուեց և նորա հրամանով ստուարացրեց Պարսից բանակը, սպասելով Պապին: Պատերազմը տեղի ունեցաւ Նպատ լեռան մօտ՝ Զիրաւ դաշտում. կռուի ժամանակ Ներսէս Նպատ լեռան վերայ աղօթումէր բազկատարած: Պատերազմը վերջացաւ Հայոց յաղթութեամբ. Սմբատ Բագրատունին Մեհրուժանին փախչելիս բռնեց և սպանեց հրաշէկ շամիրուրը նորա գլխին դնելով և ասելով. «Դու կամենումէիր Հայոց վերայ Թագաւորել, իսկ ես, իբրեւ Բագրատունի առպետ պսակումեմ քեզ»:

Այս յաղթութիւնից յետոյ Պապ Յուսէփի անձնական զօրքերին մեծամեծ պարգևներով յետ դարձրեց և երկիրը մի փոքր խաղաղեց։ Ներսէս 382 թուին Վաղարշապատում ժողով կազմեց, ուր ներկայ էին թագաւորը, նախարարները, եպիսկոպոսները և քահանայք, և երդմանցրեց նոցա Աստուծոյ անունով որ միմեանց հետ սիրով լինին։ Թագաւորը արդարապէս ուղղութեամբ և խնամքով վարուի նախարարների ու ժողովրդեան հետ, իւր հօր — Արշակի նման չըզրկի ու անիրաւութիւն չըգործի։ Իսկ նախարարները նորա մասին չամբաստանեն, այլ ձեռնտու և օգնական լինին նորան։ Պապը Ներսէսի խորհրդով, սկզբում սկսեց բարուք կեանք վարել։ Իւր հօր բոլոր յափշտակածները յետ դարձրեց իրանց տէրերին և ժողովրդին հայրաբար խնամարկում էր։ սակայն երկար չըտւեց այս, շուտով անձնատուր եղաւ մոլութեանց և որպէս զի ազատ լինի իւր անօրէնութեանց մէջ, 384 թուին Եկեղեաց գաւառի Խախ գիւղում թունաւորելով սպանեց իւր քարերար և Հայաստան երկրի ու եկեղեցու խնամակալ հայր Ներսէսին, որ արժանի իւր մեծագործութեանց կոչուեց ՆԵՐՍԷՍ ՄԵԾ։ Ներսէս Մեծն դեռ հոգին չաւանդած տեսնելով ազգի դրութիւնը, մարգարէական հոգւով գուշակեց Լուսաւորչի ցեղից քահանայապետութեան բարձուիլը, եօթն հարիւրերորդների լրանալուց յետոյ մեր աշխարհի՝ Յունաց իշխանութեան տակ ընկնելը, յետոյ Նետողաց ազգի արշաւանքը և ի շարս միւս երկրներէ՝ մեր երկրին էլ տիրապետելը։ Մեծն Ներսէսի մարմինը թաղուեց Թիլ աւանում։ Ներսէս երեսուն և չորս տարի հայրապետական իշխանութիւն վարեց։

ԱՇՏԻՇԱՏԻ Ա. ԺՈՂՈՎ 365 Թ. *)

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

Այս ժողովի որոշմամբ

Ա. Արգելուեց մերձաւոր ազգականութեամբ ամուսնութիւնը, որ սովորական էր նախարարների համար. և այդպէս վարվումէին նոքա՝ որ իրանց ժառանգութիւնը ուրիշին չանցնէր։

Բ. Արգելուեց հեթանոսական սովորութեամբ ննջեցեալների վիրայ մինչև ոճրագործութիւն հանող սուգը։

(*) Պատմ. Ժող. դ. Գ. եր. 33.

Գ. Ուրուկների, գոթիների և բորոանների համար, որոնք իրանց փոխադրական ախտի պատճառով հալածվում էին քաղաքներից և գիւղերից հեռու,—իւրաքանչիւր գաւառի բարեխառն տեղերում հիւանդների՝ համար հիւանդանոցներ, կոյրերի և կաղերի համար՝ անկեղանոցներ պէտք է շինուէին. և այս բոլորի համար շրջակայ գիւղերից և քաղաքներից տուրքեր և հասոյթներ սահմանուեց յատուկ խնամատարների և սպասաւորների հսկողութեմբ:

Դ. Որբերի համար՝ որբանոցներ, իսկ այրիների համար՝ այրիանոցներ պէտք է հաստատուէին, և ի սնունդ՝ սահմանուեցին հասոյթներ շրջակայ գիւղերից և քաղաքներից. որպէս զի պատսպարուելով որբերը՝ ազատ մնային գողութիւններից, իսկ այրիները՝ այլ և այլ անկարգութիւններից:

Ե. Օտարների և հիւրերի համար պէտք է իւրաքանչիւր քաղաքում և գիւղում հիւրանոցներ շինուէին գիւղերից ու քաղաքներից հասոյթներ ստանալով. որովհետեւ հիւրերը և օտարները ասպնջականութիւն չըգտնելով՝ բացօթեայ էին մնում և չարիքներ էին գործում:

Զ. Բնակարաններ պէտք է շինուէին երեք կարգի կրօնաւորների համար, որոնք բնակութիւն չունենալու պատճառով՝ ոմանք դատարկաշրջիկ կեանք էին վարում, ոմանք քաղաքում աշխարհականների տներում էին կենում, ուրիշներն էլ բնակում էին գիւղերում և վանքերում. այս պատճառով պէտք է շինուէին անապատներում եղբայրանոցներ, առանձին ճգնողների համար՝ միայնանոցներ և առանձնակեացների համար՝ շատ խրճիթներ, իւրաքանչիւրի կարգի համար առանձին կանոններ հաստատելով:

Ներսէս այս կանոններին համեմատ սկսեց գործել, և իւր հաստատած բարեգործական հաստատութեանց վերայ տեսուչներ, և վանականների ընտրութեամբ՝ վանքերում առաջնորդներ կարգեց:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Բ. ԺՈՂՈՎ *):

Արշակ Թագաւորը նախարարները և բոլոր աւագանին տեսնելով Ներսէսի բարեկարգութիւնները 366 թուին Վաղարշապատում Բ. Ժողով գումարեցին և որոշեցին Ներսէսին կարգել ԿԱԹՈՒՂՈՍ և ՊԱՏՐԻԱՐԺ Ս. Գրիգոր Լուսաւորչի Աթոռին, սահմանելով որ այսուհետեւ Հայոց հայրապետները այլ ևս Կեսարիայից չառնեն կաթողիկոսութեան օծումն, այլ Հայ եպիսկոպոսներից:

(*) Պատմ. Ժող.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ ՏԻՆԱԵՐԱԿԱՆ Ս. ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆՆԵՐ. *)

Թէոդոս մեծի թագաւորութեան ժամանակ սկսեց ճարակուել Մակեդոնի աղանդը, որ համարումէր թէ — Ս. Հոգին Հօր և Որդւոյ էութիւնից չէ, այլ օտար է. — վասնորոյ հարիւր յիսուն հայրապետներ ժողովուեցին Կոստանդնուպօլսում, և հոգեմարտ կոչելով Մակեդոնին՝ դատապարտեցին ու նշովեցին նորա աղանդը և սահմանեցին հետեւեալ կանոնները:

Ա. Հաստատ մնալ նիկիոյ Ս. Ժողովի հարց հաւատի վերայ, և նշովել բոլոր հերձուածողներին:

Բ. Եպիսկոպոսները իրանց վիճակից դուրս կարգադրութիւն չանեն. Ալէքսանդրու եպիսկոպոսի իշխանութեան տակ լինին Եգիպտոսի եկեղեցիքը. եպիսկոպոսները նիկիոյ Ժողովի կանոնների համեմատ ունենան աւագութեան դասաւորութիւնը. անկոչ եպիսկոպոսները որ իրանց վիճակից դուրս ձեռնադրութիւն են անում՝ չանեն, և նիկիոյ Ժողովի կանոնին հպատակեն. Հռովմայ և Կոստանդնուպօլսոյ աթոռոց վերաբերութեամբ Հռովմայ եպիսկոպոսից յետոյ պատուել Կ. Պօլսոյ եպիսկոպոսին, իբրև նոր Հռովմայ եպիսկոպոս:

Գ. Մաքսիմոսի եպիսկոպոսութիւնը և նորանից ձեռնադրուածները ու կարգադրութիւնները չընդունուին և ոչինչ համարուին:

ԳԼ. Է.

Մեծն Ներսէսին 384 թ. յաջորդեց Ալբիանոսի ցեղից Հարքայի եպիսկոպոս Նահակ, որ Ապահունեաց Մանազկերտ քաղաքիցն էր: Սա ինչպէս 366 թ. Վաղարշապատի Բ. Ժողովով որոշուած էր, Հայ եպիսկոպոսներից ընդունեց կաթողիկոսական օծումն. այսպիսով միանգամ ընդ միշտ վերջ տրուեց կաթողիկոսական օծումն ընդունելու համար Կեսարիա գնալուն: Նահակ լինելով այր ու հեռի ի գովուելէն **), կառավարեց եկեղեցին չորս տարի: Սորա օրով Պապ սկսեց աւելի ևս անկարգութեամբ վարուել. և երբ մտածումէր Յոյներից վտարանջել, ձեռքակալուեց և Կոստանդնուպօլիս տարուելով, այն տեղ ստանուեց: Պապին յաջորդեց Վարազդատ Արշակունին, մի սրտեայ, քաջ և պատերազմող մարդ. սորա թագաւորութեան երկրորդ տարին վախճանուեց Նահակ, և տեղը 388 թուին յաջորդեց իւր ազգական Զաւէն, որ վարեց իւր հայրապետական իշխանութիւնը չորս տարի և 392 թ. վախճա-

(*) Կանոնագիրք Սինոդի:

(**) Խոր. գիրք Գ. գլ. ԼԹ.

նուեցում, տեղը յաջորդ թողեց իւր ազգական Ասպուրակէսին *) որ վախճանուեց 397 թ: Թէ Զաւէն, թէ Շահակ և թէ Ասպուրակէս ոչինչ չըկարողացան անել իրանց կարճօրեայ իշխանութեան պատճառով. մանաւանդ որ դոցա օրով Հայաստանի գրութիւնը շատ ցաւալի էր. վասն զի Վարազդատ թագաւորը տեսնելով Յունաց մեծամեծների ամբարհաւաճութիւնը, երբ կամենումէր Պարսից հետ դաշն կապելով վտարանջել Յոյներից, — դաշնակցութիւնը դեռ գլուխ չեկած յայտնի եղաւ կայսեր. ուստի Վարազդատ 391 թ. գնաց Կոստանդնուպօլիս արդարաւանաւ, բայց առանց կայսեր տեսնելու՝ աքսորուեց Թուլիս կղզին: Թէոդոս կայսրը Հայոց Արշակունի Հարստութիւնը աւելի ևս քայքայելու և թուլացնելու համար՝ Հայաստանը երկու մասն րաժանեց որոց վերայ Պապի Արշակ և Վաղարշակ որդւոցը թագաւորեցնելով՝ Յոյն զօրքերով ու զօրապետներով ուղարկեց Հայաստան: Արշակ բնակութիւն հաստատեց Դուին մայրաքաղաքում, իսկ Վա-

(*) Բիւզանդ գլ. Զ. գլ. Բ. Գ. Դ. Մեծն Ներսիսի յաջորդ այս կաթողիկոսների անունները գնումէ այսպէս. Զաւէն, Շահակ և Ասպուրակէս, այսինքն. Զաւէնի անունը Շահակից առաջ, Թէպէտ Խորեն. (գիրք Գ. գլ. ԼԹ.) Շահակի համար գրումէ. « ոչ հեռի ի գովութենէ » . և Զաւէնի (Խոր. գիրք Գ. գլ. Խ.) ու Ասպուրակէսի (Խոր. գիրք Գ. գլ. ԽԱ.) համար ոչ լաւ է գրում և ոչ վատ. իսկ Յովհաննէս Զ. կաթողիկոս Շահակի համար գրումէ. « այր գովելի և լի առաքինութեամբ և բարեկարգութեամբ կրօնից » . Զաւէնի համար — « Եւ եղբայր նորուն (Շահակայ) Զաւէն հաստատի յաթող նորա՝ նորին առաքինահարաշ վարուք պայծառացեալ » . և Ասպուրակէսի համար — « Ի նոցին (Շահակայ և Զաւէնայ) առաքինութիւնսն յառաջագէմ գտեալ » (եր. 31.) . սակայն Բիւզանդ թերեւս առատելութեան, Զաւէնի համար գրումէ. « Եւ էր Զաւէնս այս անուանի զաւակ Աղբիանոս եպիսկոպոսի ի գեղջէ Մանաւազկերտոյ. էր սա բարդիւք այր չարարար խիստ և նախանձոտ. Բայց սակայն կրօնս մի, զոր ետ յիւրում ժամանակի. զի ամենայն քահանայից ուսոյց առնել հանգերձ զինուորաց, Զի թողին զկրօն առաքելական եկեղեցեացն, սկսան գնալ ըստ իւրեանց մտաց. զի ոչ ըստ կրօնիցն ագանէին քահանայքն զպճղնաւորն, որպէս օրէն էր ի բնէ, այլ սկսան զնոտորկոտութի վերայ ծնգացն ունել. Եւ զարդարէին զհանգերձս իւրեանց պէս պէս նարօտօք, և սիգային որպէս ոչ վայել էր. և զմորթ մեռելոտիս գազանացն քահանայք անխտիր ագանէին, որ ոչ վայել էր. Եւ ինքն Զաւէնն

դարշակ՝ Եկեղեաց գաւառի Երիզայ տաճնում: Վաղարշակ շուտով մեռաւ, և ըստ Պարսից և Յունաց դաշնագրութեան՝ Հայաստանի արեւելեան մասը, որի մէջ էր և Դուին քաղաքը մնաց Պարսից: Վաղարշակի մեռնելուց յետոյ, երբ Արշակ Յունաց բաժինն անցաւ՝ Պարսից կողմից Դուինում թագաւոր կարգուեց Խոսրով Գ. Արշակունին:

Ասպուրակէսի մահից յետոյ Մեծն Ներսիսի որդին Ասհակ Պարթեւ, որ իւր մանկութիւնից Կոստանդնուպօլստում հեղինական լեզուով լաւ կրթութիւն էր ստացել, և իւր կնոջ մահից յետոյ կրօնաւոր դարձած՝ իւր 60 աշակերտների հետ խստակրօն կեանք էր վարում, ընտրուեց կաթողիկոս, և առանց Պարսից հաճութեան սպասելու, Խոսրովից հաստատուեց իւր կոչման մէջ:

Ասհակ Պարթեւ կաթողիկոսանալուց յետոյ իւր առաքելների վարքովը և մեծազգի ծագմամբը սկսեց ազդել հայ թագաւորների, իշխանների, ռամիկների և սոսկականների վերայ: Նա իւր սրբակրօն աշակերտների հետ հոգ տանելով մանուկների կրթութեան համար, աւելի ևս պատկառելի դարձաւ:

աթինեալս և զտապակեալս զժապաւինեալս նարօտօք ագաներ, զսամուրենիս և զկնգմենիս և զգայլենիս ագաներ. և աղուեսենիս զանձամբ արկեալ, անխտիր ի բեմ ելեալ նստէին. Որկորստութեամբ, ագահութեամբ, անառակութեամբ կայր Զաւէն զամենայն աւուրս կենաց իւրոց. և սա կալաւ զտեղի զամենայն աւուրս կենաց իւր ամս երիս. (Դպ. Զ. գլ. Բ.). Շահակի համար գրումէ. «Ապա Շահակ կործեայ եկաց գլուխ եպիսկոպոսաց փոխանակ Զաւինայ յետ մահունորա ամս երկուս. Եւ էր սա այր քրիստոնեայ, բայց ոչինչ զչարեցաւ ընդ կարգս Զաւինայ՝ զոր եղեալն էր նորա՝ փոխել, սակայն առաջնորդեաց սա ամս երկուս, և փոխեցաւ յաշխարհէ. (Դպ. Զ. գլ. Գ.). Ասպուրակէսի համար գրումէ. «Ապա յետ մահուն Շահակայ եպիսկոպոսի եկաց գլուխ եպիսկոպոսաց Ասպուրակ ոմն ի զաւակէ Աղբիանոսի եպիսկոպոսի, այր քրիստոնեամիտ աստուածապաշտ արդար. և առաջնորդեաց զրանն Խոսրովու. Բայց միայն վասն կրօնիցն հանգերձոյն զեղեալ կարգն ըստ կրօնին Զաւենայ գնացին սոքա. (Դպ. Զ. գլ. Դ.). Այս ձեւ աննպաստ գրուածքը Փաւստոս Բիւզանդացու Զաւէնի մասին, ըստ հաւանական ենթադրութեան, պէտքէ համարել չըկամութեան արդիւնք. որ լինելով ժամանակակից նորան, չէր կարողանում տանել տեսնելով նորան յաթոռ հայրապետութեան բարձրացեալ:

Նախարարները, որ չէին կամենում Խոսրովին, սկսեցին ամբաստանել Պարսից արքունիքի առաջ՝ Թէ, Խոսրովի հաւատարմութիւնը դէպի Պարսից արքունիքը կեղծ է, և Խոսրով Յունաց հետ միշտ յարաբերութեան մէջ է. և այս հաստատելու համար մէջ էին բերում Յունաստանում կրթուած Սուրբ Սահակի կաթողիկոսութիւնը, որ հաստատել էր Խոսրով առանց Պարսից գիտութեան: Այս ամբաստանութեան նշանակութիւնն տուեց Նապուհ Պարսից թագաւորը և Խոսրովին իւր մօտ կանչեց. երբ Խոսրով մերժեց, Նապուհի հրամանաւ նորա Արտաշիր որդին ծանր զօրքով եկաւ Հայաստան, Սահակին գահընկէց արեց և Խոսրովի տեղ նորա Վռամշապուհ եղբօրը թագաւոր նշանակելով՝ վերադարձաւ Պարսկաստան, հետը տարաւ շղթայակապ Խոսրովին և Անյուշ բերդում փակել տուեց:

Սահակ Պարթև Սահականոյշ անուամբ մի դուստր ունէր, որ տուել էր Համազասպ Մամիկոնեանին ի կնութիւն: Երբ սպարապետ Սահակ ասպետը մեռաւ, Սահակ Պարթև խնդրեց Խոսրովին և ապա Վռամշապուհին՝ Համազասպին կարգել սպարապետ. Վռամշապուհ նոր կասկածանաց տեղի չըտալու համար առանց Պարսից չրկամեցաւ կատարել Ս. Սահակի խնդիրը. ուստի Ս. Սահակ Վռամշապուհի թղթով գնաց Պարսկաստան Պարսից Արտաշիր թագաւորի մօտ: Արտաշիր Ս. Սահակին որպէս Պահլաւի, պատուով ընդունեց և նորա բոլոր խնդիրները կատարելով՝ Համազասպին սպարապետ նշանակեց, Մամիկոնեան նախարարութիւնը պատուոյ հինգերորդ կարգը բարձրացրեց և յանցաւոր Կամսարականներին ու Ամատունիներին ներեց միայն ի շարս կրօնսերագոյն նախարարների դասելով:

Սահակ Պարթև Պարսկաստանից վերադառնալով ձեռք զարկեց նորոգել ուրացեալ Վահան Մամիկոնեանի և Մեհրուժան Մամիկոնեանի քանդած Սուրբ Հռիփսիմէի վանքը, ուր գտնելով Գրիգոր Լուսաւորչու խաչաձև կնքով կնքուած Ս. Հռիփսիմէի տապանը, ինքն ևս կնքեց և ամփոփելով գերեզմանի մէջ՝ տօն հաստատեց:

Որչափ և Հայաստանի քաղաքական վիճակը տխուր պատկեր էր ներկայացնում իւր քայքայուած և երկպառակեալ դրութեամբ, այնքան մխիթարական էր եկեղեցական վիճակը. որովհետև հայ հայրապետները անձնուէր իրանց ստանձնած պաշտօ-

նին՝ աշխատում էին յաւ հոգեւորականների մասնակցութեամբ ժողովրդեան քարոյական և մտաւոր զարգացման համար: Այս տեսակ հայրապետներից առաջինը հանդիսացաւ Սահակ Պարթեւ, նորան ձեռնառաւ գտնուեց Վաւաշապուհ և օժանդակ՝ Մեսրոպ Մաշտոց:

Մեսրոպ Մաշտոց Տարօնոյ Հայեկոյ գիւղիցն էր, Վարդան անուն մի առաքինի մարդու զաւակ, սա մեծացել և ուսել էր Մեծն — Ներսիսի մօտ, որի մահից յետոյ արքունի դրան քարտուղար նշանակուեց վարժ լինելով հելլէն, պարսիկ և ասորի գպրութեան, հմուտ էր նա և աշխարհական կարգերին և զինուորական արուեստովը ցանկալի իւր զօրականներին*): Սակայն Մեսրոպին չըկարողացան հրապուրել աշխարհային մեծութիւնները, նա թողեց, բոլորը գնաց Գողթան գաւառը և սկսեց մենակեցութեամբ ապրել: Տրդատի ժամանակով ծածուկ մնացած հեթանոսական սղանդը, որ թագաւորական իշխանութեան վատթարամտուց յետոյ սկսել էր Գողթան գաւառում՝ յայտնուիլ, գաւառին Շաբաթ իշխանի օգնականութեամբ քնջեց: Սիւնեաց աշխարհումն էլ սկսեց իւր փրկարար գործունէութիւնը օգնականութեամբ Սիւնեաց Վաղինակ իշխանի:

Ս. Մեսրոպ քարոզելու ժամանակ շատ նեղութիւն էր կրում. վասնզի ինքն էր կարդում և թարգմանում. իսկ ուրիշները, որ միայն կարգալ գիտէին իսկ թարգմանել ոչ, ընթերցուածքը ժողովրդեան անհասկանալի են թողում: Վասն որոյ մտքումը դրեց ամեն ջանք դործ դնել, հայերէն լեզուի նշանադրեր գտնել. այս նպատակով շատ տաժանելի փորձեր անելուց յետոյ վերջապէս եկաւ Վաղարշապատ Ս. Սահակի մօտ ու յայտնեց նորան իւր միտքը: Սուրբ Սահակ, որ ի սրտէ ցանկանում էր հայերէն գպրութիւնը ծաղկեցնել, շատ ուրախացաւ Ս. Մեսրոպի այս մտադրութեան վերայ, և եպիսկոպոսների ժողովին յայտնեց Ս. Մեսրոպի ցանկութիւնը:

Վաւաշապուհ թագաւորը նոր վերադարձած լինելով Միջագետքից, պատմեց թէ. երբ Սուրբ Մեսրոպի քարտուղարութիւնից դուրս գալուց յետոյ չէր կարողանում քարտուղար գտնել, որովհետեւ գրութիւնները պարսկերէն գրով էին լինում, Միջագետքում

(*) Կորիւն. պատմ. Մեսրոպայ:

մի Հարէլ անուն քահանայ խոստացաւ հայերէն լեզուի համար գործածական գարձնել իւր մերձաւոր Դանիէլ եպիսկոպոսի յարմարեցրած հին նշանագրերը: Ժողովը լսելով թագաւորից այս խնդրեց հոգալ այս մասին. իսկ թագաւորը գործին համակրող իւր հաւատարիմ Վահրիճ Խագունուն ուղարկեց Միջագետք: Վահրիճ Հարէլի հետ գնաց Դանիէլի մօտ և հմտանալով Դանիէլեան հին նշանագրերին*), որ կարգաւորուած էր յունական տառերի ձևով, բերեց Հայաստան: Սահակ և Մեսրոպ փորձով տեսան որ, Դանիէլեան այդ հին նշանագրերը բաւական չեն հայերէն լեզուի բոլոր հնչիւնները արտաբերել, ուստի սկսեցին կատարելագոյնին հետամուտ լինել:

Ս. Մեսրոպ իւր սկսած գործը չըկամեցաւ կիսատ թողնել. ինքն իւր աշակերտների հետ անձամբ գնաց Միջագետք. Դանիէլի մօտ առաջին եղածից աւելին չըգտնելով, գնաց Եդեսիայի գիււանի վերակացու ոմն ճարտասան հեթանոս Պլատոնի մօտ: Պլատոն ևս ոչինչ կարաց օգնել, բայց խորհուրդ տուեց գնալ իւր վարժապետ Եպիփանի մօտ: Ս. Մեսրոպ Եպիփանին մեռած գտաւ. ուստի իւր աշակերտներից մի մասը յունական մի մասն էլ ասորական կրթութեան յանձնելով՝ Փիւնիկէից անց կացաւ գնաց Սամոս, Եպիփանի աշակերտ հելլէն դպրութեան հռչակաւոր գրիչ Հուփանոսի մօտ: Ս. Մեսրոպ սորանից էլ շահ չըտեսնելով՝ Աստուծոյ ապաւնեց և խոր մտածմունքի մէջ խորասուզուած ժամանակ հոբոյ աչքերին երեւութացած տեսաւ աջ ձեռքի թաթ, որ մի վէմի վերայ գլուխէր Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Ի տառերը: Այս տառերը տպաւորուեցին նորա մտքումը, որոնց ձևակերպեց Հուփանոսի հետ: Ս. Մեսրոպ իւր Յովհան եկեղեցացի և Յովսէփ պանդաղի աշակերտների հետ սկսեց Սուրբ Գրքի հայերէն թարգմանութիւնը նորապիւտ տառերով, առաջին անգամ թարգմանելով Սողոմոնի առակները և հոգ

(*) Վարդան Մեծն վկայումէ որ եղել են հայերէն գրեր, և հաստատումէ հետեւեալ խօսքերով. «Եւ զի լեալ է հայերէն գիր հնոցն՝ վկայեցաւ ի ժամանակս Լևոնի արքայի, զի գտաւ գրամ ի Վիլիկիա, հայերէն գրով զըրշմեալ զանուն կռապաշտ թագաւորացն հայկազանց. զորոյ զթերութիւնն ելից նորս մեր Եզրաս, աստուածախառն շնորհօք յցեալ, նորոգիչ նորոյս Իսրայելի և կարգաւորիչ»: Վարդան պատմ. եր. 50 տպեալ ի Վենետիկ 1862:

տանելով միանգամայն իւր փոքր աշակերտներին գրչութեան արհեստը սորվեցնելու :

Վռամշապուհի թագաւորութեան վեցերորդ տարին 405 թ. Ս. Մեսրոպ Հայոց նշանագրերը ձեռքին մտաւ Հայաստան : Թագաւորը, Հայրապետը և բոլոր աւագանին անարտուժ ուրախութեամբ ընդունեցին նորան : Այս առաջին ոգևորութիւնը անցնելուց յետոյ Ս. Մեսրոպ Վռամշապուհի և Ս. Սահակի աջակցութեամբ և հրամանով ուսուցանելու համար ժողովեց Վաղարշապատ քաղաքը ուշեղ, առողջ, փափկաձայն և երկար ոգի (երկար շունչ ունեցող) ընտրեալ մանուկներ : Պարսից բաժնում սկսեց Ս. Մեսրոպ ուսուցանել դպրոցներ հաստատելով, բայց ի յունաց բաժնից՝ որի վերայ այն օրից, երբ հայ հայրապետները իրանց եպիսկոպոսներից սկսեցին սուրբ օծումն ընդունել՝ յոյները Կեսարիոյ եպիսկոպոսին էին իրաւատէր համարում :

Իւր առաքելական քարոզութիւնն ու վարդապետութիւնը շարունակելու համար Ս. Սահակ Հայրապետի հաւանութեամբ իւր աշակերտ Տիրայր խորձենացու, Մուշէ տարօնեցու և այլոց հետ զնաց Գողթնեաց գաւառը, այնտեղ ձեռնադրութեամբ տեղւոյն Շաբաթ իշխանի և նորա Գիտ որդու՝ քրիստոնէական ուսման գործը յառաջ տանելու համար ամեն զիւզում և զաւառում վանականներ կարգելուց յետոյ, անցաւ Սիւնեաց աշխարհը և օգնականութեամբ տեղւոյն Վաղինակ իշխանի սկսեց մտադրեալ նպատակը յառաջ տանել, Սիւնեանց եպիսկոպոս կարգեց ոմն Անանիա Սիւնեցի և երկիրը ուսման գործը առաջ տանող վանականներով լցրեց : Ս. Մեսրոպին աջակից գտնուեց նոր իշխանութեան զլուխ անցած Վասակ Սիւնին, որ որդիական հնազանդութեամբ նորա ամեն կարգադրութիւնները աշխատումէր իկատար ածել :

Փոքր ինչ ժամանակից յետոյ Մեսրոպ թարգման ունելով ոմն Զաղայ հմուտ հայ և հելլէն լեզուի՝ զնաց Վրաստան. Վրաց համար ևս տառեր գտաւ և օգնականութեամբ նոցա Բակուր թագաւորի և Մովսէս եպիսկոպոսի ժողովեց մանուկներ ուսուցանելու, իսկ դատաւարակութեան գործը յանձնեց իւր խորձենացի Տիրայր և տարօնեցի Մուշէ աշակերտներին : Մի ժամանակից յետոյ Մեսրոպ հանդիպելով ոմն աղուանցի Բենիամին անունով երէցի, և նորանից հասու լինելով աղուաներէն լեզուի հնչիւններին, բաւ այնմ նշանագրեր հնարեց Աղուանից համար, և տեղւոյն

Երեմիա եպիսկոպոսապետի և Արսլաղէն թաղաւորի օգնականու-
թեամբ սկսեց նոցա մանուկների դաստիարակութեան համար ևս
հոգալ իւր Ենովք, Գանան և Յովնաթան աշակերտներին յանձ-
նելով Աշուանից գաստիարակութեան գործը, դարձաւ Հայաստան
Սահակի մօտ, որ պարապած էր թարգմանութեամբ, և այն՝ յառ-
կապէս ասորերէնից. որովհետեւ յունարէն գրքերը նախ որ այր-
ուած էին Մէհրուտան Արծրունուց, և երկրորդ որ պարսիկները
չէին թողում յունարէն ուսանել:

(Կը շարունակուի):

Յ. Վ. Մ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԿԵՆՏՐՕՆՆԵՐԸ.

Փ Ա Ր Է Զ.

(Շարունակութիւն Գրութեան Բ. Ը.)

ԳԼՈՒԽ Գ.

Փարիզի տեղագրութիւնը:—Կլիմա:—Բնակիչների բաժանումը թաղերի վերայ:—
Բնակիչների աճելութիւնը պոժմեան դարու սկզբից:—Տնտեսութիւն եւ Փարիզի
Բիւդժէն (ելեւմտացոյց) :—Բիւդժէի չափազանց աճելութիւնը:—Քաղաքի մուտք եւ
ծախքը:—Քաղաքական տնտեսութեան եւ կառավարութեան առանձին յատկու-
թիւնները:—Լուսաւոր եւ խաւար կողմերը այդ տնտեսութեան:—Չափազանց ծախ-
սերի եւ պարտքերի օրինակները:

Փարէզը Եւրոպայի մայրաքաղաքների կենտրոնից—Լոնդոնից յետոյ
ամենաբազմամարդն է և ամենաընդարձակը, զետեղուած Սենա գետի
երկու եզերքների և նորա երկու կղզիների վերայ (սրբոյն Լուգովիկոսի
և հին քաղաքի Cité), Քաղաքը կալուած ունի ոչ միայն գետի նոյն իսկ
եզերքները, այլ նոյնպէս և այն բազմաթիւ բլրաձև բարձրութիւնները,
որոնք տարածվում են աջ եզերքի հիւսիսային երկայնութեամբ (բարձ-
րութիւնները Բելվիլ, Էոմօն և Մօնմարտր) և Սենայ գետի հարա-
ւային երկայնութեամբ (բարձրութիւնները Մեօգօն և Բէլ—Վիւ):

Փարիզի կլիման գերազանցում է չափաւորութեամբ, և նորա միջին
օդի խառնուածը (температура), ըստ յարաբերութեան նորա աշխար-
հագրական դրութեան, բաւական բարձր է (10, 74), Մեծ տօթեր և
ցրտեր գրեթէ չըկան, թէպէտ Փարէզը չէ կարելի նոցանից կատարելա-
պէս ազատ համարել, Փարիզի կլիմայի գերազանց յատկութիւններից
մէկը է յաճախ, առատ տեղացող անձրևները, որոնք շատ զգալի չեն
Փարիզում, որովհետեւ քաղաքը լաւ սալայատակած է և օրինակելի